

ՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՆՂԼԵՐԵՆ ԼԵՃՎԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱԿՈՐ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Վերջին շրջանում հատուկ հետաքրքրություն է առաջացել հանրալեզվաբանությանը հարող բազմապիսի հայեցակարգերի նկատմամբ: Ինչպես հայտնի է, այս լեզվագիտակարգը իր սկիզբն է առել ԱՄՆ-ում և ի սկզբանե այն հիմնականում առնչվում էր անգլերեն լեզվի և ամերիկյան հանրության միջև հարաբերությունների հետազոտմանը, մասնավորապես. անգլերենի կիրառմանը հասարակական շերտավորման և ամերիկյան հանրության լուսի ներքո: Բոլորովին վերջերս բավականաչափ հանրալեզվաբանական հետազոտություններ են կատարվել՝ կապված այլ լեզուների հետ: Այնուամենայնիվ, հանրալեզվաբանության ոլորտի սակավ հետազոտված հայեցակարգերից են լեզվական անցումները, ինչը ամերիկյան լեզվաբանության մեջ անվանվում է codeswitching (language switching) եզրույթով: Լեզվական անցումների, կամ լեզվանցումների, սահմանումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. դրանք բանավոր խոսույթում տեղի ունեցող պարբերաբար կամ եզակի անցումներ են մեկ լեզվից մյուսը, սովորաբար մայրենի լեզվից օտար լեզու, կամ թե օտար լեզվի որոշ տարրերի՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ներթափանցումը մայրենի լեզվի բանավոր խոսքում: Դեյվիդ Քրիստալը նշում է, որ մեկ լեզվից (code) անցումը մեկ ուրիշը տեղի է ունենում, երբ երկու լեզուներին տիրապետող անձը իր խոսքում անցումներ է անում մեկ լեզվից մյուսը՝ խոսելիս մեկ այլ անձի հետ, որը նույնպես տիրապետում է երկու լեզուներին: Աս վերաբերում է նաև նրանց, ովքեր տիրապետում են երկրորդ լեզվին նվազ մակարդակի վրա կամ օգտագործում են այն որոշ սխալներով (Քրիստալ, 1987):

Լեզվանցումները կարող են լինել լեզվի տարբեր մակարդակներում և ընդունել տարբեր ձևեր, «ներառյալ բառակապակցություններ, արտահայտություններ և նախադասություններ երկու լեզուներից, որոնք հաջորդում են մեկը մյուսին երկարատև խոսույթում» (Սքիբա, 1997, 1): Ամերիկացի լեզվաբան Քուլը նշում է, որ «լեզվանցումները մեծ մասամբ լինում են միաբառ (84%), սակավաթիվ դեպքերում՝ արտահայտությունների/բառակապակցությունների մակարդակով (10%), և ամենասակավաթիվ դեպքերում նախադասությունների միջոցով (6%)» (Քուլ, 1991, 66):

Լեզվանցումները և դրանց հաճախականությունը կախված է մի շարք պարագաներից, ինչպես, օրինակ, ով է հաղորդակցողի զրուցակիցը. ընտանիքի անդամը, ընկերը, թե գործընկերը: Բացի այդ, պակաս կարևոր չէ այն, թե որտեղ, որ վայրում է տեղի ունենում խոսակցությունը. տանը, դրսում, թե աշխատանքի վայրում: Ինչպես նշում է Լ.Միլոյը, «այն հաղորդակցողները,

որոնք տիրապետում են երկու լեզուների, տարբեր վերաբերմունք ունեն այդ լեզուների նկատմամբ, քանի որ մի լեզուն կարող է նպատակահարմար լինել մի դեպքում, իսկ մյուսը՝ մեկ ուրիշ» (Միլրոյ, 1987, 185):

Կարծում ենք, որ հայկական հանրությամբ ևս հետաքրքիր կլինի դիտել, թե ինչպես է լեզվական անցում տեղի ունենում հայերենից անգլերեն: Մասնավորապես, կփորձենք տեսնել, թե երբ, ինչու և ինչպես կարող են տեղի ունենալ լեզվաանցումները հայերեն բանավոր խոսույթում: Վերլուծության ժամանակ հաշվի ենք առել նաև այն հանգամանքը, թե հասարակական որ խավի ներկայացուցիչներն են սովորաբար դիմում լեզվաանցումներին:

Նախ կցանկանայինք նշել, թե ինչ տեսակի լեզվաանցումներ են սովորաբար առանձնացվում: Լեզվաանցումները լինում են. ներասույթային (intra-sentential), միջասույթային (inter-sentential) և արտասույթային (extra-sentential):

Ներասույթային լեզվանցում ասելով սովորաբար հասկանում են առանձին բառերի, բառակապակցությունների կամ արտահայտությունների ներմուծումը մեկ նախադասության սահմաններում: Միջասույթային լեզվաանցումները վերաբերում են բարդ ստորադասական նախադասություններին, որոնց դեպքում գլխավոր նախադասությունը մայրենի լեզվով է, իսկ երկրորդականը՝ անգլերեն: Արտասույթային լեզվաանցման տակ հասկանում են օտար լեզվով առանձին նախադասությունների կիրառումը մայրենի խոսքաշարում:

Սույն հոդվածում կվերլուծենք լեզվաանցումը որպես հաղորդակցողի նշույթավորված (marked) և ոչ նշույթավորված (unmarked) ընտրություն: Վերլուծության ժամանակ հաշվի ենք առել մի շարք կարևոր արտալեզվական գործոններ, ինչպիսիք են. ա. բանավոր խոսույթի մասնակիցների միջև ընկած անձնական հարաբերությունների գործոնը; բ) շարահյուսական և հնչունաբանական ներթափանցման գործոնը; գ) հաղորդակցողի հասարակական դիրքի գործոնը; դ) ընթացիկ երանգավորման գործոնը: Նշենք նաև, որ ուսումնասիրության նյութը կլինեն մեր իսկ տվյալները, հաղորդակցումները, դիտարկումները Հայաստանի տարբեր հասարակական խավերի տարբեր տարիքային խմբերի հետ:

Բոլորովին գաղտնիք չէ, որ ներկայումս անգլերենը Հայաստանում մեծ տարածում ստացած և դասավանդվող լեզուն է: Վերջին շրջանում բանը հասել է նրան, որ անգլերենը ակտիվորեն ներթափանցվում է հայերեն առօրյա խոսքի մեջ: Դա նկատելի է հատկապես երիտասարդ ներկայացուցիչների մոտ: Ուստի բոլորովին զարմանալի չէ, երբ լսում ես նրանց զրույցներում անգլերեն բառեր, արտահայտություններ և նախադասություններ, լինի դա տրանսպորտում, հեռախոսային զրույցներում կամ նույնիսկ հեռուստաժրագրերում: Այսպես, մի քանի տարի առաջ հեռուստատեսությամբ հարցազրույցի էր հրավիրված տասնվեց տարեկան սկսնակ մի երգչուհի: Ուղիղ եթերով տեղի ունեցող հարցազրույցի ժամանակ, ամեն անգամ սայթազելիս, նա օգտագործում էր անգլերեն "Sorry" բառը, բայց ոչ դրա հայերեն համարժեքը:

Բերենք ևս մեկ տիպական օրինակ, երբ հայ դպրոցականները կատարում են մեկ բառի լեզվաանցում իրենց պատասխաններում՝ օգտագործելով հատկապես "because" շաղկապը. Օրինակ.

Բայց ինչու արեցիր դա?

Because.

Բնական է, որ նման լեզվանցումները տեղի են ունենում ավելի շատ ոճական նկատառումներով. քան թե այլ դրդապատճառներով:

Երբեմն, պատահիները իրենց համար զարմանալի թվացող ինֆորմացիային արձագանքում են "Oh, my God!" արտահայտություններով: Օրինակ.

Գիտես քանի հարց է «Տեսական քերականությունից»? Հիսուն:

Չէ հա. Oh, my God!

Սույն համատեքստում հնչեցված լեզվաանցման հարաբերական նշույթավոր-վածությունը կարելի է վերագրել այն փաստին, որ հաղորդակցությունը տեղի է ունենում կրթական միջավայրում, այն է՝ անգլիական ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողների միջև, ովքեր չունեն անգլերենի հավասար իմացություն:

Լեզվաանցում հայերենից անգլերեն կարելի է նկատել ավելի մեծահասակ հաղորդակցողների միջև, ովքեր տիրապետում են անգլերենի որոշակի բառապաշարի, կամ թե այդ պահին մասնակցում են անգլերենի դասընթացների և դրսևորում են իրենց նվազ գիտելիքները հարմար պահերին: Սիս ևս մեկ հաղորդակցության հատված երկու երիտասարդ աղջիկների միջև, որը մենք պատահաբար լսեցինք .

Պատկերացնում ես, այդ թանկարժեք վերարկուն հետ տվեց

But why?

Շատ հավանական է, որ երկրորդ խոսակիցը արձագանքեց անգլերեն բոլորովին մեխանիկորեն, չունենալով անգլերենի իր իմացությունը իր ընկերուհուն ցույց տալու նպատակ: Այնուամենայնիվ, հակված ենք կարծելու, որ անգլերեն "But" շաղկապի կիրառումը ինչ որ չափով պայմանավորված է հայերենի "բայց" շաղկապի հնչյունական նմանությամբ: Միևնույն ժամանակ . կարծում ենք, որ անգլերեն համարժեքի կիրառումը ինչ որ չափով նվազեցնում է իր զարմացը և հնչում է սակավ հուզարտահայտիչ:

Inter-sentential և intra-sentential տիպի լեզվաանցումները հաճախ տեղի են ունենում այն անձանց հաղորդակցության ընթացքում, որոնք պատկանում են միևնույն ակադեմիական շերտին, ինչպես, օրինակ, անգլերենի մասնագետների մոտ: Անգլերենի իրավիճակային այս ընտրությունը կարելի է վերագրել այն փաստին, որ երբեմն անգլերենն է այլ ոչ թե հայերենը, որ կարող է լավագույնս արտահայտել հաղորդակցողի միտքը, կամ թե երբ հաղորդակցողը տվյալ պահին կարծեք թե ի վիճակի չէ գտնել այն հայերեն արտահայտելու հարմար տարբերակ: Որպես օրինակ բերենք հաղորդակցության մի հատված, որը տեղի է ունեցել իմ և իմ գործընկերոջ միջև:

....Իսկ երեխան ինչպես է

վերջերս նա մանկապարտեզ չի գնացել, and he now sticks to his mother, և որոշակի դժվարություն ունի նորից մանկապարտեզին ընտելանալուն:

Այս տեսակի լեզվաանցումները՝ հայերեն - անգլերեն - հայերեն inter-sentential մակարդակի վրա կարելի է բացատրել թերևս նրանով, որ he sticks to his mother նախադասությունը, շնորհիվ իր բառահարաճանակային իմաստի, ավելի լավ քան հայերեն համարժեքը կարտահայտի երեխայի պահվածքը այդ ժամանակահատվածում: Ջարմանալի չէ, որ խոսողը վերջում դարձյալ անցնում է իր մայրենի լեզվին: Այս տեսակի լեզվաանցումները կարող են տեղի ունենալ, եթե հարակցվող լեզուները ունեն ընդհանուր հատկանիշներ շարահյուսական կառուցվածքի առումով, առնվազն շարադասության առումով: Ինչպես նշում է Քուլը, «լեզվաանցումը կարող է տեղի ունենալ նախադասությունում միայն այն դեպքում, եթե այն չի խախտում տվյալ լեզուների քերականությունը» (Քուլ, 1991, 65) Նշենք նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ խոսույթը տեղի է ունենում անգլերեն լեզվի մասնագետների միջև, նման լեզվաանցումները կարելի է համարել ոչ նշույթավորված:

Այնուամենայնիվ, երբեմն լեզվաանցումները տեղի են ունենում որոշակի նպատակներով, հատկապես եթե դրանք տեղի են ունենում մասսայական վայրերում: Մեր փորձից վերցրած հետևյալ դեպքը ցույց է տալիս նման լեզվաանցման նշանակությունը.

.... Եվ չմոռանաս վաղվա գիտասեմինարի մասին
Կարեն, I have got it.

Նման անցումը անգլերենի կարելի է թերևս բացատրել նրանով, որ այդ պահին բազմության առջև հայերեն համարժեքով պատասխանը թերևս փոքր ինչ կոպիտ կհնչեր, մինչդեռ անգլերենով պատասխանը թվում է առավել քաղաքավարի և չեզոք:

Իհարկե, կարելի է բերել լեզվաանցումների այլ դեպքեր, սակայն այս հոդվածում մեր նպատակն էր նկարագրել հայերենից անգլերեն անցման հիմնական դեպքերը հայերեն խոսությամբ: Կարելի է ենթադրել, որ հաշվի առնելով անգլերենի մասսայականացումը Հայաստանում, լեզվաանցման դեպքերը հետզհետե կշատանան:

Գրականության ցանկ

1. Crystal, D. The Cambridge Encyclopedia of Language. Cambridge University Press, 1987.
2. Skiba, R. Code Switching as a Countenance of Language Interference, the Internet TESL Journal, Vol. 3, No. 10, 1997.
3. Cook, V. Second Language Learning and Language Teaching. Edward Arnold/Hodder Headline Group: Melbourne, 1991.
4. Milroy, L. Observing and Analyzing Natural Language: A Critical Account of Sociolinguistic Method. Blackwell Publishers: Oxford, 1987.